ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արշակունիների ծագումնաբանության հայտնի և անհայտ էջերը

Առարկա՝Պատմություն

Հեղինակ՝ Հասմիկ Յուրիկի Գոհարյան

Ղեկավար՝ Խաչատրյան Սոնա

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Սամվել Հովսեփյանի անվան հ.116 հիմնական դպրոց

Երևան 2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Պայքար Հռոմի և դրածո թագավորների դեմ: Հայ-պարթևական մերձեցումը: Տրդատ Արշակունի: Հռոմեական արշավանքները: Վաղարշ II և Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը.....5
2. Տրդատ II: Սասանյան Պարսկաստանը և Հայաստանը: Քրիստոնեության մուտքը Հայաստան: Քրիստոնեության ընդունման նախադրյալները: Գրիգոր Լուսավորիչ: Քրիստոնեության հռչակումը պետական կրոն.....9
3. Տրդատ III: Խոսրով Կոտակ: Դվինի հիմնադրումը: Տիրան թագավոր: Պայքարի սրումը արքունիքի և եկեղեցու միջև.....11
4. Արշակ II-ի ներքին և արտաքին քաղաքականությունը: Պարսկական զորքերի ներխուժումը: Պապի գահակալումը: Վարազդատ Արշակունի: Միջազգային հուսահատության սրումը և Հայաստանի առաջին բաժանումը.....15
5. Արշակունիների անկումը.....25

Եզրակացություն.....27

Օգտագործված գրականության ցանկ.....29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արշակունիները մ. թ. ա. 247 թվականին իշխանության են հասել Պարսկաստանում, և երկիրը կառավարել շուրջ կես հազարամյակ՝ մինչև մ. թ. 226 թվականը: Այդ ընթացքում Մերձավոր Արևելքում տիրապետող էր հելլենիզմը:

Հայ Արշակունիների տիրապետության ժամանակ Մեծ Հայքի թագավորությունը կրել է քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխություններ: Դրանց մեջ առանձնանում է ավատատիրական կարգերի հաստատումը (3-5-րդ դարեր), քրիստոնեության ընդունումը (301) և հայ գրերի գյուտը (405): 387 թվականին Հայաստանը առաջին անգամ բաժանվել է Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Արևմտյան հատվածում նոր թագավորներ չեն կարգվել, իսկ արևելյան հատվածում հայ Արշակունիներն իշխել են մինչև 428 թվականը:

Արշակունիները պարթևական արքայական դինաստիայի ներկայացուցիչներ էին, որոնց մի ճյուղը հաստատվել է Հայաստանում: Առաջին Արշակունին Տրդատ Ա-ն էր՝ Պարթևստանի թագավոր Վաղարշ Ա-ի եղբայրը:

Նա հայոց գահին է բազմել 52 թվականին և ընդմիջումներով իշխել ավելի քան քառորդ դար՝ մինչև 88 թվականը: Պաշտոնապես նրա թագավորության սկիզբը համարվում է 66 թվականը, երբ նա թագավոր է ճանաչվում Հռոմի կայսր Ներոնի կողմից:

Արշակունիները ընդհատումներով իշխել են մոտ 4 դար՝ մինչև 428 թվականը: Նրանց անվան հետ է կապված ավատատիրական կարգերի հաստատումը, քրիստոնեության ընդունումը, Հայոց գրերի գյուտը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել Արշակունիների ծագումնաբանության հայտնի և անհայտ էջերը:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական **խնդիրները.**

- ուսումնասիրել Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը,
- ներկայացնել Քրիստոնեության ընդունման նախադրյալները,

- ուսումնասիրել միջազգային հուսահատության սրումը և Հայաստանի առաջին բաժանումը,
- ներկայացնել Արշակունիների անկումը:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 29 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ՊԱՅՔԱՐ ՀՌՈՄԻ ԵՎ ԴՐԱԾՈ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՄ: ՀԱՅ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ: ՏՐԴԱՏ ԱՐՇԱԿՈՒՆԻ: ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ: ՎԱՂԱՐՇ II ԵՎ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Պարթևական Վաղարշ Ա Արշակունի թագավորի օրոք Պարթևստանի և Մեծ Հայքի թագավորությունները փոխադարձ քայլեր ձեռնարկեցին մերձենալու և սերտ բարեկամություն հաստատելու ուղղությամբ: Հայոց ավագանին համաձայնեց պարթևական թագավորի եղբայր Տրդատին ճանաչել հայոց թագավոր: Վաղարշ արքան և նրա եղբայր Տրդատը մեծ բանակով մուտք են գործում Հայաստան և հայկական ուժերի օգնությամբ գրավում թագավորության մայրաքաղաք Արտաշատը և վաճառաշահ քաղաք Տիգրանակերտը[1]:

Երկու տարի անց Տրդատը հայ ավագանու օգնությամբ հաստատվում է հայոց գահին, իսկ հռոմեացիների օգնությամբ Մեծ Հայքում հաստատված վրաց արքայազն Հռադամիզդը դիմում է փախուստի և շատ չանցած մահապատժի ենթարկվում իր իսկ հոր կողմից: Տրդատի հայոց գահ բարձրանալով՝ հռոմեա-պարթևական մրցակցությունն ավելի խորացավ, և շուտով տասնամյա պատերազմ սկսվեց հռոմեացիների և պարթևա-հայկական զորքերի միջև: Պատերազմը, որ սկզբում դանդաղ էր ընթանում, 58 թ. թևակոխեց ակտիվ գործողությունների փուլ: Պատերազմի հինգերորդ տարում հռոմեական զորավար Կորբուլոնը գրավեց Արտաշատը:

Հայ-պարթևական զորքերը համառ դիմադրությունից հետո նահանջեցին պարթևական տիրույթներ: Կորբուլոնը՝ գարնանը պատրաստվելով շարժվել Տիգրանակերտ, հրամայեց ավերել Արտաշատը՝ պատճառաբանելով, թե զորքերի սակավության պատճառով չի կարող կայազոր թողնել այնտեղ: Մայրաքաղաքի ավերումը պայմանավորված էր նրանով, որ հռոմեացիները պարզապես սարսափում էին այն մտքից, որ Արտաշատն իր հզոր ամրություններով կարող է հայտնվել հայկական զորքերի ձեռքում: Հռոմեացիները տիրացան նաև Տիգրանակերտին և կրկին հայոց գահ բարձրացրին օտարազգի թագավորի: Հայերն ու պարթևները չհանդուրժեցին այդ, և Վաղարշն իր բոլոր զորքերով շտապեց Հայաստան: Սկսվեցին

[1]Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1981թ., էջ 105:

բանակցությունները, որոնց արդյունքում որոշվեց Մեծ Հայքից դուրս բերել թե' պարթևական և թե' հռոմեական զորքերը: Ելնելով հռոմեա-պարթևական այդ համաձայնությունից՝ Վաղարշը դեսպանություն ուղարկեց Հռոմ՝ խնդրելով Ներոն կայսրին իր եղբայր Տրդատին ճանաչել հայոց թագավոր: Կայսրը, ձեռք բերված համաձայնությունը խիստ անպատվաբեր համարելով Հռոմի համար, մերժեց Տրդատին հեռակա թագադրելու առաջարկը: Եվ քանի որ Կորբուլոնը պաշտպանում էր Եփրատի ամրացված շրջանը, Հայաստան ուղարկվեց Պետոս զորավարի գլխավորությամբ մի նոր բանակ:

Վերջինս գոռոզ և պատերազմական գործում ոչ հմուտ անձնավորություն էր: Նրան թվում էր, թե հեշտությամբ կարող է հաղթել հայերին և պարթևներին: Նա անգամ սահմանային մի քանի բերդեր գրավելուց հետո Հռոմ զեկույց ուղարկեց, թե Հայաստանը նվաճված է: Նրա ինքնավստահությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ հարկ չէր համարում բանակի շուրջը պարեկություն հաստատել: 62 թ. պարթևա-հայկական զորքերը Վաղարշի և Տրդատի գլխավորությամբ պատերազմական գործողություններ սկսեցին հռոմեացիների դեմ: Հաջողության չհասնելով Եփրատի ափերին՝ Վաղարշն իր զորքերով միացավ Տրդատի հայ-պարթևական ուժերին: Հայ-պարթևական բանակները նույն թվականին փայլուն հաղթանակի հասան Պետոսի բանակի նկատմամբ Հռանդեա (Եռանդ) կոչվող վայրում:

Հռոմեական բանակի անպարտելի համարվող զինվորները ենթարկվեցին տարբեր նվաստացումների և ստիպված եղան անցնել <<լծի>> տակով՝ թշնամուն հանձնելով իրենց զենքերը:

Անարգանքի <<լուծը>> երեք նիզակից էր կազմված, որի տակով սողալով ստիպված էին անցնել հռոմեացի գոռոզ զինվորները: Այդպիսի անարգանքի չէին ենթարկվել հռոմեացի զինվորները վաղուց ի վեր: Հռոմի պարտությունն ակնհայտ էր: Պետոսի զորաբանակները լքեցին Հայաստանը և արագորեն տեղափոխվեցին կայսրության տարածք:

Վաղարշը կրկին դեսպանություն ուղարկեց Հռոմ, պահանջելով իր եղբայր Տրդատին ճանաչել Հայոց թագավոր: Ներոնն էլ պատրաստ էր այդ ճանաչելու՝ պայմանով, որ Տրդատն անձամբ գա Հռոմ և իր ձեռքից ստանա հայոց թագը: Ներոնն այդ ճանապարհով կամենում էր ինչ-որ չափով վերականգնել կայսրության խարխլված

հեղինակությունն Արևելքում: Ավելին, այդ քայլով Հռոմն ուզում էր ցույց տալ, որ ոչ թե իր կրած պարտության պատճառով, այլ կայսեր հանդես բերած մեծահոգության շնորհիվ է Տրդատն ստանում հայոց գահը:

Միաժամանակ Կորբուլոնը հրաման ստացավ արշավել պարթևների դեմ՝ հրահանգ ունենալով կրկին հորդորել Տրդատին գալ Հռոմ և հայոց գահը ստանալ Ներոնի ձեռքից: Հայոց ավագանին և պարթևական արքունիքը՝ կայսեր առաջարկը իրավացիորեն դիտելով որպես իրենց հաղթանակ, համաձայնեցին Ներոնի առաջարկին: Տրդատը 65 թ. 3000-անոց թիկնախմբով, որի մեջ էին նրա ընտանիքը, բազմաթիվ հայ և պարթև մեծամեծ իշխաններ, ճանապարհ ընկավ Հռոմ և կայսերը հանդիպեց Նեապոլիսում: Հայոց թագավորի պատվին կազմակերպվեցին զանազան հանդեսներ, կրկեսային ներկայացումներ, գազանամարտեր: Շատ չանցած Տրդատը Հռոմի ֆորումում թագադրվեց Ներոնի կողմից և Հայաստան վերադարձավ որպես օրինական թագավոր:

Կայսրը Արտաշատը վերականգնելու համար, որն ավերվել էր հռոմեացիների կողմից, մեծ գումար նվիրեց և արհեստավորներ տրամադրեց Տրդատ արքային: Տրդատ Ա-ով սկիզբ դրվեց Արշակունիների կրտսեր ճյուղի իշխանությանը Մեծ Հայքում: Տրդատի հետագա գործունեության մասին սուղ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նրա օրոք նշանակալից շինարարություն է իրականացվել, որի արդյունքում ոչ միայն վերականգնվել է Արտաշատը, որը հայոց թագավորը դիվանագիտորեն կոչել է Ներոնեա, այլև կառուցապատվել են երկրի այլ շրջանները: Հատկապես մեծ շինարարություն ծավալվեց Գառնիում, որի մասին հավաստում է Տրդատի՝ Գառնիում թողած հունարեն արձանագրությունը. <<Հելիոս (արև) Տիրիդատես (Տրդատ) թագավոր Մեծ Հայքի, թագավորելով իբրև դեսպոտ (վեհապետ) կառուցեց պայծառափայլ թագուհու համար 11-րդ տարում (75 թ.) իր թագավորության>>: Ամրոցը հիմնովին վերակառուցվեց, վեր խոյացան ամրոցի հզոր պարիսպները, հեթանոսական տաճարը և մյուս կառույցները: Հատկապես նշանավոր է Գառնիի հեթանոսական տաճարը, որը հանդիսանում է հայկական, հելլենիստական և հռոմեական ճարտարապետության ներդաշնակ համակցություն: Հայտնի է նաև, որ Տրդատ Ա-ն մի շարք պատերազմներ է մղել, հատկապես Հյուսիսային Կովկասից Այսրկովկաս ներխուժած ալանական ցեղերի դեմ:

Թշնամու դեմ կռվում Տրդատը մահացու վտանգի է ենթարկվում, երբ թշնամիներից մեկի նետած օղապարանը փաթաթվում է նրա ուսից մինչև աջ կողմի անութը: Բայց նա իրեն չի կորցնում և, սրով կտրելով պարանը, հաղթական ավարտի է հասցնում ճակատամարտը: Տրդատը՝ պատկանելով պարթև Արշակունի արքայատոհմին, բնականաբար պետք է հետևեր պարթևական արքունիքի և ցեղային սովորույթներին ու բարքերին:

Նրա հետ Մեծ Հայք եկան նշանակալից թվով պարթև ազնվականներ, որոնք զգալիորեն նպաստեցին պարթևական մշակույթի և ազդեցության տարածմանը Հայաստանում: Սակայն Հայաստանում Արտաշիսյանների օրոք հայկական տեղական ավանդույթներն այնքան խոր արմատներ էին ձգել, որ պարթևազգի իշխողները, սկսած հենց Տրդատ Ա-ից, բռնում են հայացման ճանապարհը: Այդ գործընթացն սկզբում դանդաղ էր ընթանում, քանի որ հռոմեա-պարթևական պայմանագրով Մեծ Հայքում պարթև Արշակունիների իշխանությունը ժառանգական չէր:

Պարթևները հայոց արքայի մահից հետո ներկայացնում էին նոր գահակալի թեկնածությունը, որը հաստատվելու էր հռոմեացիների կողմից: Կողմերը չէին հարգում իրենց պարտավորությունները, որը հաճախ հանգեցնում էր պատերազմների: Իր հերթին Մեծ Հայքի Արշակունի թագավորները լուրջ քայլեր էին ձեռնարկում իրենց իշխանությունը ժառանգական դարձնելու ուղղությամբ: Նրանց իշխանությունը ժառանգական դարձավ II դարի վերջերից, որի շնորհիվ նրանք՝ խնամիական ու այլ կապերով կապվելով հայոց թագավորության ավագանու հետ, արագորեն հայացան:

Արշակունիներն ընդունեցին հայկական բարքերն ու սովորությունները և իրենց վարած ներքին ու արտաքին քաղաքականությամբ ցույց տվեցին, որ իսկական հայ թագավորներ են: Հայ ժողովուրդը ջերմորեն ընդունեց Տրդատ Ա-ի իշխանությունը, նրան անվանեց Արտաշես՝ դարձնելով նրան, որպես հարազատ թագավորի, իր երգերի սիրելի հերոսներից մեկը:

ԳԼՈՒԽ 2. ՏՐԴԱՏ II: ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ: ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ: ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ: ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ: ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Տրդատ Բ-ն Հայոց Արշակունի թագավորն էր: Թագավորել է 217-252 թվականներին: Չդիմանալով հզորացող Սասանյանների հարձակումներին՝ հեռացել է Հռոմեական կայսրություն:

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում տեղի է ունեցել 301 թվականին: Դա հայ ժողովրդի պատմության մեջ մի դարակազմիկ իրադարձություն էր: Տրդատ Գ Մեծ Արշակունին (287-330 թթ.) աշխարհում առաջինը ճանաչեց քրիստոնեությունը՝ որպես պետական, պաշտոնական կրոն:

Հայոց եկեղեցին սովորաբար վարդապետական անվան կիրառում չի ունեցել. այն կոչվել է Հայաստանյայց (կամ՝ Հայաստանի), Հայոց կամ Հայ անունով, իսկ սուրբ, առաքելական, ուղղափառ կամ այլ կոչումները գործածվում են որպես պատվանուն: <<Առաքելական>> անունով այն տարբերվում է Մերձավոր Արևելքի քրիստոնեական մյուս եկեղեցիներից[2]:

Հայոց եկեղեցու առաջին հիմնադիրներն են եղել սուրբ Թադեոս (քարոզչության տարիները՝ 35-43 թթ.) և սուրբ Բարդուղիմեոս (44-60 թթ.) առաքյալները, որոնք հատուկ կոչմամբ անվանվում են Հայաստանի Առաջին Լուսավորիչներ:

Նրանց գերեզմանները որպես սրբավայրեր հարգվել ու պահպանվել են պատմական Հայաստանի հարավարևելյան կողմերում գտնվող Արտազի (Մակու) և Աղբակի (Բաշկալե) վանքերում: Այսպիսով, հայ եկեղեցին ունի առաքելական ծագում: Հայաստանի առաջին եկեղեցին՝ Սուրբ Թադևոսի վանքը Հայոց եկեղեցու 1-3-րդ դարերի պատմությունը քիչ է ուսումնասիրված: Հաճախ Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունումը (301 թվական) շփոթում են քրիստոնեության Հայաստան մուտք գործելու հետ (1-ին դար): Քրիստոսից հետո առաջին դարին է վերագրվում Գողթնի Եկեղեցու հիմնադրման ավանդությունը, ըստ որի Բարդուղիմեոս առաքյալը Կումսիին ձեռնադրում է Գողթն գավառի եպիսկոպոս:

[2]Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հատոր 1,Երևան, 1981թ., էջ 268:

Ագաթանգեղոսի <<Հայոց պատմության>> համաձայն, երբ 287 թվականին Տրդատը հռոմեական զորքի օգնությամբ հաղթանակած վերադառնում է Վաղարշապատ՝ վերագրավելու իր հոր գահը, ճանապարհին՝ Եկեղյաց գավառի Երիզա ավանում, զոհաբանական զոհեր է մատուցում Անահիտ աստվածուհու մեհյանին: Թագավորի զինակից Գրիգորը հրաժարվում է մասնակցել զոհաբերության արարողությանը, քանի որ քրիստոնյա էր: Հայոց արքան այդ ժամանակ տեղեկանում է նաև, որ Գրիգորը իր հայր Խոսրովին սպանող Անակ իշխանի որդին է:

Տրդատ Գ-ն հրամայում է նրան գցել Արտաշատի ստորերկրյա բանտը (որն այժմ հայտնի է <<Խոր վիրապ>> անունով), որ սահմանված էր մահապարտների համար: Տրդատ Մեծ թագավորը, Աշխեն թագուհին և թագավորի քույր Խոսրովդուխտը Գրիգորից բացի Մեծ Հայքում քրիստոնեության տարածմանը և պետական կրոն դառնալուն էապես նպաստել են Հռիփսիմյանց կույսերը:

Ավանդության համաձայն՝ նրանք հռոմեացի կույսեր էին, ովքեր հալածվել էին Դիոկղետիանոս կայսեր կողմից և փախել արևելք: Նրանց թվում էին սուրբ Հռիփսիմեն, Սուրբ Գայանեն, Սուրբ Շողակաթը, սուրբ Նունեն և այլք՝ տարբեր տվյալներով մինչև 40 հոգի: Նրանցից Նունեն (Նինո) հիմնադրում է վրաց եկեղեցին: Կույսերը նախ երկրպագում են Քրիստոսի տնօրինական տեղերին (Պաղեստինի սուրբ վայրեր) և ապա Եդեսիայի վրայով անցնում Մեծ Հայք՝ հաստատվելով Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ՝ հնձաններում: Տրդատը ցանկանում է ամուսնանալ Հռիփսիմե կույսի հետ, սակայն մերժում է ստանում: Ի պատասխան դրա՝ 300 թվականին հրամայում է բոլոր կույսերին մահապատժի ենթարկել: Կույսերի նահատակությունից հետո հայոց արքան ջղային ծանր հիվանդություն է ստանում: Ավանդույթի համաձայն՝ այդ հիվանդությունը որակվում է խոզակերպությամբ[3]:

Թագավորի քույրը՝ Խոսրովիդուխտը, մի քանի անգամ երազ է տեսնում, որ Տրդատին կարող է բուժել միայն Արտաշատում բանտարկված Գրիգորը: Նրան ազատում են բանտարկությունից և հանդիսավոր կերպով ընդունում մայրաքաղաք Վաղարշապատում:

[3]Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007թ., էջ 85:

ԳԼՈՒԽ 3. ՏՐԴԱՏ III: ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ: ԴՎԻՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ: ՏԻՐԱՆ ԹԱԳԱՎԱՐ: ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ ԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԵՎ

Տրդատ Գ Մեծ (250-ական թվականներ – 330), Մեծ Հայքի Արշակունի թագավոր 287 թվականից։ Հայոց թագավոր Խոսրով Բ Արշակունու (272-287) որդին։ Կրթվել և դաստիարակվել է հռոմեական արքունիքում։

Ըստ պատմիչներ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու, տիրապետելով արտակարգ ուժի, աչքի է ընկել կրկեսամարտերում, ինչպես նաև՝ Հռոմեական կայսրության մղած պատերազմներում։

Հռոմեա-պարսկական պատերզամները իրար հաջորդելով շարունակվում էին՝ կազմաքանդ անելով Հայաստանի տնտեսությունը։ Պատերազմի սկզբում առավելությունը պարսկական զորքերի կողմն էր, սակայն հռոմեացիները, համալրում ստանալով, 297 թվականին հայկական զորամասերի օգնությամբ հռոմեացիները սոսկալի պարտության մատնեցին պարսիկներին։ Ներսեհ արքան գերի ընկավ իր ողջ ընտանիքով հանդերձ։ Վերջինս ստիպված 298 թվականին Մծբինում հաշտության պայմանագիր կնքեց։

Խոսրով Գ (ծն.թ. անհայտ – վ. 338), Մեծ Հայքի Արշակունի թագավոր մոտ 330–ից։ <<Խոսրով Մեծի թոռը, քաջ և հզոր Տրդատ թագավորի որդին>> (Բյուզանդ, Գ, գ)։ <<Կոտակ>> պահլավերեն բառ է, նշանակում է <<մանուկ, երեխա, փոքր>>։ Խորենացին (Գ, ը) նրան կոչում է հայերեն բառով՝ Փոքր և շեշտում է նրա կարճահասակ լինելը։ Հաջորդել է հորը՝ Տրդատ Գ Մեծին։

Վերջինիս մահից հետո երկրում ստեղծվել էր խառնակ իրադրություն։ Գահին էր ձգտում Հայոց հյուսիս–արևելյան կուսակալ Սանատրուկ Արշակունին։ Պարսից Շապուհ II արքայի զինակցությամբ ապստամբել էր Հայոց հարավային կուսակալը՝ Աղձնիքի անջատամետ բդեշխ Բակուրը։

Այդ պայմաններում Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի գլխավորած հակապարսկական խմբակցությունը Խոսրովին գահ բարձրացրեց Կոստանդինոս կայսեր ուժերով։ Խոսրովը ճնշեց Բակուր բդեշխի խռովությունը, վերամիավորեց Աղձնիքն ու Հայոց Միջագետքը։ Բնաջնջեց վիճելի կալվածների համար միմյանց դեմ

կռվող նախարարներին՝ Որդունիներին ու Մանավազյաններին, բռնագրավեց նրանց կալվածները նա Վաչե Մամիկոնյան սպարապետի գլխավորությամբ զորաբանակ է ուղարկում նշված տոհմերի դեմ, որոնք կատարում են արքայի հրամանը և հիմնահատակ ոչնչացնում այս նախարարական տները։ Պարսկաստանին տարեկան որոշ հարկ վճարելու պայմանով Խոսրովը հաշտվեց նաև Շապուհ II-ի հետ։

Հայաստանից Հռոմի ուժերի հեռանալուց հետո Շապուհի սադրանքով Սանատրուկ–Սանեսյանը կովկասյան բազմաթիվ ցեղերի ուժերով մտավ Այրարատ, գրավեց Վաղարշապատը և շուրջ մեկ տարի տիրեց ամբողջ երկիրը։ Սանատրուկի զորքերը բանակեցին Արագածոտնի Ցլու գլուխ կոչված լեռան վրա, իսկ ինքը հեծելագնդով նստեց Վաղարշապատում։ Խոսրովը կաթողիկոսի հետ փակվել էր Կագովիտ գավառի Դարույնք ամուր բերդում։ Վաչե Մամիկոնյանը գումարեց Խոսրովին հավատարիմ նախարարների զորքերը, հանկարծակի գրոհով ոչնչացրեց Ցլու գլխի բանակը, ապա անսպասելի հարձակումով գրավեց Վաղարշապատը և Օշականի ճակատամարտում հաղթեց ու գլխատեց Հայոց գահի հավակնորդ Սանատրուկին։

Խոսրովը Օշականը պարգևեց այդ ճակատամարտում վճռական դեր խաղացած Վահան Ամատունուն։ Նա կալվածներով ու մեծամեծ այլ պարգևներով վարձատրեց նաև սպարապետին և մյուս հավատարիմ նախարարներին։ Հազարապետության գործակալությունը հանձնեց Արշավիր Կամսարականին, վախճանված Մանաճիհրին փոխարինեց որդին՝ Զորա Ռշտունին, Գուգարաց Միհրան բդեշխին՝ Խորխոռունյաց նահապետ Գարջույլ մաղխազը։ Երկիրն առժամանակ խաղաղվեց, և Խոսրովը զբաղվեց շինարարական գործերով։ Հիմնեց Դվին քաղաքը և այնտեղ տեղափոխեց արքունիքը։ Տնկեց Տաճար մայրի և Խոսրովակերտ արգելանոց–անտառները, որոնք եղել են արքայի ու ազնվական դասի, ինչպես որսազվարճության, այնպես էլ ռազմական ուսուցման վայրեր։

337 թ. Շապուհ II–ի բանակը շրջապատեց Մծբինը, իսկ մի այլ զորամաս Հեր–Զարևանդով խորացավ Հայաստան։ Խոսրովը Բզնունյաց նախարար Դատաբեին հանձնարարեց դիմադրել թշնամուն և խափանել նրա առաջխաղացումը։ Սակայն Դատաբեն անցավ Պարսից կողմը։ Վաչե Մամիկոնյանը և Վահան Ամատունին 30 հազար զորքով Վանա լճի հյուսիս–արևելյան ափին, Առեստ ավանի մոտ տված ճակատամարտում, հաղթեցին թշնամուն և ազատագրեցին երկիրը։ Դատաբեն և նրա

տոհմը ոչնչացրեցին, կալվածները վերածվեցին արքունի սեփականության։ Դրանից հետո Խոսրովը օրենք սահմանեց, որպեսզի հազար և ավելի զինվոր ունեցող աշխարհատեր նախարարներն ապրեն արքունիքում՝ թագավորի հսկողության ներքո։

Խոսրովը խզեց հարաբերությունները Սասանյան Իրանի հետ և ավելի մերձեցավ կայսրությանը։ Շուտով Շապուհը խոշոր բանակով դարձյալ ներխուժեց Հայաստան։ Հայկական բանակը նրա առաջխաղացումը կասեցրեց խոշոր զոհերի գնով։ Մարտում զոհվեցին սպարապետ Վաչե Մամիկոնյանը և ուրիշ մեծամեծ իշխաններ։ Խոսրովը վախճանվեց Դվինում, իսկ շիրիմն ամփոփվեց հայ Արշակունիների տոհմական գերեզմանոցում։

Տիրան (ծն.թ.անհայտ–մոտ 358), Հայոց թագավոր 338–350–ին։ Հաջորդել է հորը՝ Խոսրով Գ Կոտակին։ 338 թվականի գարնանը, երբ Պարսից արքա Շապուհ II–ի զորքերը ներխուժել են Հայաստան, Տիրանը Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի հետ հարկադրաբար ապաստանել է Բյուզանդիայում։ Գահին վերահաստատվել է 339 թվականի գարնանը՝ Հռոմի Կոստանդիոս I կայսեր օգնությամբ։ Հռոմի հետ կնքած պայմանագրով Տիրանը ճանաչել է նրա գերիշխանությունը, պատանդ տվել Տրդատ որդուն և թոռներին։ Տիրանի գահակալման առաջին տարիներն անցել են համեմատաբար խաղաղ։ Վարել է պետական իշխանության կենտրոնացման քաղաքականություն։

Տիրանի իշխանության վերջին տարիներին հարաբերությունները սրվում են, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Երկրի ներսում մի քանի նախարարական տներ հանդես են բերում կենտրոնախույս ձգտումներ, ապա տեղի են ունենում պետություն-եկեղեցի առաջին բախումները։ Այս բախումներն այնքան են խորանում, որ Հուսիկ կաթողիկոսը բանադրում է Տիրան թագավորին։ Վերջինիս հրամանով Հուսիկին բրածեծ անելով սպանում են։ Սրա պատճառն այն էր, որ եկեղեցին մեծապես հզորացել էր և ավատատիրական կարգերի պայքարում սկսել էր մեծ դեր խաղալ երկրի ներքին կյանքում[4]։

Տիրանը վատ հարաբերություններ է ունեցել նաև նախարարների հետ։ Օգտվելով երկրի ներքին անկայունությունից՝ Ատրպատականի մարզպան Վարազը Տիրանին ձերբակալում է, աչքերն այրում ածուխով և ուղարկում Շապուհի մոտ։ Շապուհը,

[4]Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ, Երևան, 1945թ., էջ 287։

իմանալով այն մասին, որ հայերը հռոմեացի Կոստանդիոս կայսեր մոտ պատվիրակություն են ուղարկել պարսիկների դեմ ռազմական դաշինք կնքելու նպատակով, ազատում է Տիրանին, որը սակայն կուրության պատճառով հեռանում է պետական գործից: Կյանքի վերջին տարիները Տիրանն անց է կացնում Արագածի լանջերին՝ Կոշում:

ԳԼՈՒԽ 4. ԱՐՇԱԿ II-Ի ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ: ՊԱՊԻ ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ: ՎԱՐԱԶԴԱՏ ԱՐՇԱԿՈՒՆԻ: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՍՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Արշակ Բ-ն հայ Արշակունիների արքայատոհմի երևելի թագավորներից է (350–368 թթ.): Նա պայքարել է հայրենիքի անկախության պահպանման համար:

Արշակ Բ-ն հաջորդել է հորը՝ Տիրանին, ում գերել և կուրացնել էր տվել Պարսից արքա Շապուհ II-ը:

Թեև նա գահակալել է Հռոմի և Պարսկաստանի համաձայնությամբ, սակայն չի դարձել նրանց կամակատարը և վարել է ինքնուրույն քաղաքականություն:

Արշակ Բ-ի թագավորության առաջին տասնամյակում Հայաստանն ապրել է խաղաղությամբ, բարգավաճել և հզորացել է:

Կաթողիկոսական աթոռը վերադարձվել է Գրիգոր Լուսավորչի տոհմին: Կաթողիկոս Ներսես Ա Մեծի և Արշակ Բ-ի նախաձեռնությամբ Տարոն գավառի Աշտիշատ գյուղում 356 թվականին գումարվել է հայկական եկեղեցական առաջին կանոնադիր ժողովը, ընդունվել են նաև հեթանոսական սովորույթների դեմ կանոններ՝ արգելվել են մերձավոր ազգականների ամուսնությունը, բազմակնությունը և այլն[5]:

Նրանց ջանքերով Հայաստանում հիմնվել են հիվանդանոցներ, կուսանոցներ, աղքատանոցներ, հյուրանոցներ, գավառներում բացվել են նոր դպրոցներ:

Արշակ Բ-ն վարել է նախարարներին համախմբելու, անհնազանդներին հպատակեցնելու քաղաքականություն: Արքունի զորաբանակը մեծացնելու, թագավորական իշխանությունն ամրապնդելու և նախարարներին թուլացնելու նպատակով Մասիսի ստորոտին (Կոգովիտ գավառում) հիմնադրել է Արշակավան արտոնյալ, ապահարկ քաղաքը, սակայն ըմբոստ նախարարները Պարսկաստանի օգնությամբ կործանել են այն:

359 թվականին վերսկսվել է պատերազմը Պարսկաստանի և Հռոմի միջև: Հայաստանի սահմանները վտանգվել են պարսից կողմից, ուստի Արշակ Բ-ն ընդունել է Հռոմի հետ դաշնակցելու առաջարկությունը:

[5]Ղազարյան Մ., Արշակ II, Թիֆլիս, 1909թ., էջ 248:

Նա արշավանք է սկսել՝ Հայոց Միջագետքը պարսիկներից ազատագրելու և կայսր Հուլիանոսի բանակին միանալու համար: Սակայն զոհված Հուլիանոսին հաջորդած Հովիանոսը, դավաճանելով Արշակին, 363 թվականին դաշնագիր է կնքել Շապուհի հետ և, չնայած կռվելու բավարար ուժեր ուներ, ընդունել է նրա առաջարկած ծանր ու ստորացուցիչ պայմանները:

Համաձայն դաշնագրի, որը հռոմեացի պատմիչ և այդ պատերազմի մասնակից Ամմիանոս Մարկելլինոսն անվանել է <<ամոթալի>>, Հռոմը Պարսկաստանին է զիջել Արվաստանը, Աղձնիքը, Մոկքը, Կորդուքը, Ծավդեքը, Ռեիմենեն, Շապուհի հետ գործարք կնքել՝ ի հաշիվ հայկական տարածքների:

Ձերբազատվելով Հռոմից՝ Շապուհ II-ն արշավել է Հայաստան: Քառամյա պատերազմի (364–368 թթ.) ընթացքում Արշակ Բ-ն անհավասար պայքարում պահպանել է Մեծ Հայքի սահմանները, իսկ Փավստոս Բուզանդի վկայությամբ՝ հոների ու ալանների դաշնակցությամբ նույնիսկ ասպատակել է Ատրպատականը:

Շապուհը հարկադրված դադարեցրել է հարձակումներն ու դիմել նենգ միջոցների՝ Արշակ Բ-ի դեմ նախ հրահրել է Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին, ապա, հաշտություն կնքելու պատրվակով, մայրաքաղաք Տիզբոն է հրավիրել նրան: Հայոց թագավորին և սպարապետ Վասակ Մամիկոնյանին (Վահան Մամիկոնյանի եղբայրը) բանտարկել են Խուժիստան նահանգի Անհուշ բերդում: Շապուհի հրամանով Արշակին կուրացրել և տանջամահ են արել, իսկ Վասակին՝ մորթազերծ:

Արշակ Բ-ն (մոտ 345-368) ձգտում էր նորմալ հարաբերություններ պահպանել կայսրության հետ: Նա հատուկ դեսպանություն է ուղարկում կայսեր մոտ, Կեսարիայում Հայաստանի նոր եպիսկոպոսապետ (կաթողիկոս) ձեռնադրված Ներսեսի (353-372) առաջնորդությամբ, որպեսզի <<կայսեր ու իրենց միջև եղած համաձայնության ու խաղաղության դաշինքը նորոգեն>>:

Կոստանդիոս Բ կայսրը, ի պատասխան Արշակ Բ-ի դիմումի, շտապում է ցուցաբերել իր բարյացակամությունը նրանով, որ վերադարձնում է արքունիքում գտնվող պատանդներին՝ Արշակ Բ-ի եղբայրների որդիներին՝ Գնելին ու Տիրիթին:

Արշակ Բ-ի գահակալության առաջին տարիներն անցնում են խաղաղ իրադրության պայմաններում: Նրա ճկուն քաղաքականության շնորհիվ երկիրն սկզբում ապրում է խաղաղ շինարարության և ծաղկման շրջան: Այդ շրջանում, Փավստոսի

վկայությամբ, Հայաստանը <<երկու թագավորների միջև խաղաղվեց, բարեկարգվեց, կազմակերպվեց>>: Հռոմն ու Պարսկաստանը այդ ժամանակ զբաղված էին պատերազմներով իրենց երկրների ծայրագավառներում և պարսկահռոմեական սահմանն առժամանակ հանգիստ էր թողնված:

Կարգավորելով հարաբերությունները Սասանյանների ու հռոմեացիների հետ՝ Արշակ Բ-ն աշխատում է հաշտեցնել միմյանց թշնամի նախարարական խմբակցությունները: Դրա առաջին պայմանը տոհմիկ ավագանու ժառանգական արտոնությունների վերականգնումն էր:

Նա հաշտեցման քաղաքականություն է վարում Մամիկոնյանների հզոր ու ազդեցիկ նախարարական տոհմի հետ: Արշակ Բ-ն Մեծ Հայքի բոլոր զինված ուժերի հրամանատար է կարգում իր պատանեկության ընկեր Վասակ Մամիկոնյանին (345-368 թթ.): Փառաբանված հայ հեծելազորի գլուխ կանգնած, Վասակը պաշտպանում էր իր հայրենիքի սահմանները և շատ անգամ դուրս քշում ներխուժած թշնամիներին: Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանի անունն անպարտելի հերոսի փառքով էր պսակված, նրա մասին երգեր ու վեպեր էին հորինվում:

Վասակ Մամիկոնյանն ու Ներսես Ա Մեծը երկրի անկախության համար մղված պայքարում այն համոզմունքն ունեին, որ պետք է լիովին հենվել Հռոմի վրա, որի հետ հայերը մշակութային ու կրոնական ընդհանրություն ունեին:

Սակայն բացահայտորեն արտահայտված հռոմեասիրական քաղաքականությունը հարուցում էր նախաքրիստոնեական հասարակության հետ կապված հայ ավագանու պահպանողական թևի և նրա թիկունքում կանգնած Սասանյանների դժգոհությունը: Արքունիքի երրորդ, ոչ պակաս ազդեցիկ անձնավորությունը՝ Հայր մարդպետ Գղակը, ձգտում էր Արշակ Բ-ի քաղաքականության հիմքը դարձնել կողմնորոշումը դեպի սեփական ուժերը, երկրի իրական հզորությունը, դեպի ժողովրդի հայրենասիրությունը, հայրենիքը կրծքով պաշտպանելու նրա պատրաստակամությունը:

Սակայն IV դարի երկրորդ կեսի սկզբներից ստեղծված քաղաքական իրադրությունը, ինչպես և ներքին կյանքի բարդությունները, որոշակի և հաստատուն քաղաքականություն վարելու հնարավորություն չէին ընձեռում:

Իր գահակալության առաջին տարիներին Արշակ Բ-ն հիմնադրում է նոր քաղաք, որը նրա անունով կոչվում է Արշակավան: Այս քաղաքի պատմության մեջ, ինչպես

կիզակետում, բեկվեցին թագավորական իշխանության և նախարարների, մանավանդ իշխող հողատերերի և կեղեքվող բնակչության սոցիալական հակասությունները:

Արշակավանը հիմնադրվում է իբրև թագավորին պատկանող քաղաք՝ դաստակերտ, Փոքր Ասիայից դեպի Իրան և Անդրկովկասից դեպի Միջագետք տանող առևտրական գլխավոր ճանապարհների խաչմերուկում՝ Կոգովիտ գավառում, թագավորական գանձարան հանդիսացող Դարույնք բերդից ոչ հեռու:

Նոր քաղաքը պետք է դառնար թագավորի հենարանը կենտրոնախույս նախարարների դեմ, ուստի այն շուտափույթ բնակեցնելու մտահոգությամբ թագավորն այնտեղ հաստատվողներին շնորհում էր զանազան արտոնություններ և, ամենից առաջ, ապաստանի իրավունք, որի շնորհիվ քաղաքը կարճ ժամանակում խիստ բազմամարդ է դառնում:

Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու վկայությամբ Արշակավանում բնակություն են հաստատում պարտապանները, ավանդառուները, ծառաները, խաբեբաները, վնասարարները և ամեն տեսակ հանցագործները: Արշակավանում հաստատված ազգաբնակչությունն ազատվելու էր բոլոր տուրքերից, հանցագործները թողություն էին ստանալու կատարած հանցանքների համար և որևէ մեկի կողմից չէին հետապնդվելու:

Այսպիսով, Արշակավանում ապաստանած մարդիկ դառնում էին քաղաքացիներ և թագավորի հենարանը՝ նախարարների կենտրոնախույս ձգտումների դեմ նրա մղած պայքարում: Թագավորի այդ կոչին արձագանքեցին ամենից առաջ նախարարների կողմից կեղեքվող և խիստ շահագործվող աշխատավորական զանգվածները: Այստեղ ապաստանում էին հասարակության ստորին խավերից ելած բոլոր նրանք, ովքեր դժգոհ էին իրենց շահագործող տերերից:

Հ. Մանանդյանը, Լեոն և Մարկվարտը ենթադրում են, որ Արշակավան էին փախել հավանականորեն ոչ միայն հանցապարտները, այլև, գլխավորապես, կախյալ գյուղացիները, <<շինականները>>,-որոնց այնտեղ տրվել էին որոշ արտոնություններ:

Թագավորական իշխանության հենարան քաղաքի հիմնադրումը և դրա հետ կապված կախյալ գյուղացիների փախուստը մեծ դժգոհություն է առաջացնում խոշոր ազնվականության շրջանում, խոշոր նախարարներից հատկապես դժգոհ էին Կամսարականները և Ներսես կաթողիկոսը, քանի որ նրանց տիրույթները մոտ էին

թագավորական ոստանին, որտեղ հիմնվել էր Արշակավանը: Բացի այդ, Կամսարականների ոստան Երվանդաշատ քաղաքը (Ախուրյանի և Արաքսի միախառնման վայրում) և եկեղեցուն պատկանող Բագավանը (Եփրատ-Արածանիի ակունքների շրջանում), որոնք խոշորագույն առևտրական հանգույցներ էին, Արշակավանի հիմնադրումով կորցնում էին իրենց նշանակությունը:

Առաջինը դուրս էր մնում առևտրական հիմնական ճանապարհներից, իսկ երկրորդը վերածվում էր սովորական միջանկյալ կայանի, դա զրկում էր նրա տերերին տարանցիկ առևտրից ստացվող շահույթներից:

Երբ Արշակ Բ-ն ավարտում է իր պալատի շինարարությունն Արշակավանում և ցանկանում օծել պալատական եկեղեցին, Ներսես Ա Մեծ կաթողիկոսի տեղապահ՝ Բագրևանդի և Արշարունյաց եպիսկոպոս Խադը հրաժարվում է մտնել <<մեղապարտ քաղաքը>> և ընդդիմանում է արքային: Նա բիբլիական մարգարեի մոլեռանդությամբ կոչ է անում ավերել այն, իսկ Ներսես կաթողիկոսը պահանջում է թագավորից՝ ետ կանգնել այդ քայլից: Այս հանգամանքը թագավորի ու եկեղեցու միջև առաջ է բերում անբարյացակամություն, որն այնուհետև փոխվում է բացահայտ թշնամության:

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներից գյուղացիների համընդհանուր դժգոհության ալիքը, որի վառ դրսևորումն էր նրանց մասսայաբար փախուստը դեպի նոր հիմնադրված Արշակավան քաղաքը, անհրաժեշտություն առաջացրեց ինչ-որ ձևով կարգավորելու հողատերերի և անմիջական արտադրողների հարաբերությունները:

Այդ նպատակով 354 թ. Աշտիշատում Ներսես Ա կաթողիկոսը գումարեց առաջին եկեղեցական օրենսդիր ժողովը, որի կանոնական որոշումները, ինչպես նշում է Հ. Մանանդյանը, վերաբերում էին ոչ միայն կրոնական-եկեղեցական խնդիրներին, այլև աշխարհիկ կյանքին ու հասարակական-սոցիալական հարաբերություններին:

Համաձայն այս ժողովի որոշումների, Հայաստանի շատ վայրերում կառուցվեցին բարեգործական հիմնարկներ՝ հիվանդանոցներ, ուրկանոց-գոդենոցներ, աղքատանոցներ, վանքերին կից դպրոցներ ու իջևանատներ, որոնք պահվում էին եկեղեցական կալվածքների եկամուտներով և ժողովրդից գանձվող առանձին տուրքերով: Աշտիշատի ժողովի կանոնական որոշումների մեջ կենտրոնականը հողատերերի և գյուղացիների փոխհարաբերությունների հարցն էր: Դ կանոնը տերերին հանձնարարում էր գթությամբ վարվել ծառաների հետ և նրանց չնեղել չափից ավելի

հարկերով, պարտադիր աշխատանքներով ու պարհակներով, հիշեցնելով, որ <<նրանց համար էլ երկնքում տեր կա>>:

Միաժամանակ կանոնը ծառաներին պատվիրում էր հնազանդ լինել իրենց տերերին: Այս միջոցառումները, պարզ է, չէին կարող հաշտեցնել շահագործողներին ու շահագործվողներին, որոնց միջև եղած հակասությունները և դրանք ծնող պատճառներն ընկած էին ֆեոդալական հասարակարգի հիմքում: Աշտիշատի ժողովի որոշումներն իրենց էությամբ դրսևորում էին եկեղեցու վերաբերմունքը երկրի ներքին կյանքում Արշակ Բ-ի վարած քաղաքականության հանդեպ[6]:

Արշակ Բ-ն հաշվի չէր առնում այն, որ ժառանգական իրավունքի հիման վրա նախարարների կառավարմանը հանձնված տարածքները փաստորեն դարձել էին նրանց անօտարելի ժառանգական սեփականությունը, իսկ այդ հողերի վրա նստած գյուղացիական համայնքները նրանցից կախման մեջ էին ընկել և թագավորն արդեն չէր կարող ըստ իր հայեցողության տնօրինել դրանք: Արշակ Բ-ն հաշվի չէր առնում նաև նախարարների ու հոգևորականության վրդովմունքը, որոնք մատնացույց էին անում թագավորի կողմից փախստական ծառաներին իրենց տերերին վերադարձնելու օրենքի խախտման դեպքերը: Այս ժամանակ տեղի է ունենում նախարարների նոր վերախմբավորում, որին նպաստեց նաև արքունիքում ծագած ընտանեկան ողբերգությունը:

Անդովկ Սյունու դուստր Փառանձեմն ամուսնացել էր Գնելի հետ: Սակայն շուտով Տիրիթը՝ Արշակի մյուս եղբորորդին, որ ցանկանում էր տիրանալ Փառանձեմին, ամբաստանում է Գնելին թագավորի առաջ և Գնելը սպանվում է: Բայց Տիրիթը նույնպես սպանվում է, իսկ Փառանձեմը դառնում է Արշակ Բ-ի կինը՝ Մեծ Հայքի թագուհին:

Այս դեպքերն ավելի են սրում թագավորի լարված հարաբերությունները նախարարների և եկեղեցու հետ: Պալատական բանսարկությունները, մանավանդ միջազգային բարդ և վտանգավոր իրադրության պայմաններում, Արշակ Բ-ին անելանելի վիճակի մեջ են դնում: Նրա քաղաքականությունից դժգոհ Ներսես Ա կաթողիկոսը մեկուսանում է երկրի քաղաքական կյանքից: Արքունիքում կենտրոնական դեմք է դառնում Հայր մարդպետ Գողակը: Ընդդիմադիր խումբը ղեկավարում էր

[6]Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ, Երևան, 1945թ., էջ 291:

հռոմեասեր ավագանին՝ քահանայապետի, սպարապետի և Կամսարականների գլխավորությամբ:

Այս պայմաններում պարսկասեր նախարարները ձգտում են մոտենալ թագավորին: Հակառակորդ ուժերի այսպիսի զուգակցումն Արշակին բերում է Հռոմի հանդեպ թշնամաբար տրամադրված նախարարների՝ Սասանյանների կողմնակիցների ճամբարը և այդ այն ժամանակ, երբ երկու տերությունները նախապատրաստվում էին նոր պատերազմի ու դրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր Հայաստանն իր կողմը գրավել:

Երկրում գոյություն ունեցող դասակարգային և դասային խոր հակասություններն ավելի սրվեցին անբարենպաստ արտաքին քաղաքական նոր իրադարձության առաջացմամբ[7]:

Ռազմական ընդհարումները պարսկահռոմեական սահմանում հարկադրելու էին Հայաստանին բացահայտել իր վերաբերմունքը կռվող կողմերի նկատմամբ: Արշակը կանգնած էր երկընտրանքի առաջ, կամ գործել որպես կայսրության կողմնակից, կամ լինել Իրանի համախոհը, սակայն երկու դեպքում էլ նրան անհաջողություն էր սպասվում: Այս երկվության մեջ էր Հայաստանի և անձամբ Արշակ Բ թագավորի ճակատագրի ողբերգականությունը:

Շապուհ Բ-ն Հայաստան է ուղարկում դեսպաններ, որոնք համոզում են Արշակին արքայից արքայի դաշնակիցը դառնալ և զինվորական մի ջոկատ ուղարկել Մծբինում գտնվող հռոմեացիների դեմ Սասանյանների ձեռնարկելիք գործողություններին մասնակցելու համար:

Արշակ Բ-ն, ինչպես հաղորդում է Փավստոսը, բազմաթիվ նախարարների հետ գնաց Արվաստան և մինչև Շապուհի գալը պարտության մատնեց հռոմեացիներին:

Արշակ Բ-ի այս վարքագիծը հակասում էր քրիստոնյա կայսեր հետ դաշինքի այն ավանդական քաղաքականությանը, որ գոյություն ուներ Տրդատ Գ Մեծի ժամանակներից ի վեր: Հռոմը, հասկանալի է, չէր կարող հանգիստ նայել այն ամենին, ինչ կատարվում էր Հայաստանում:

354 թ. հատուկ առաքելությամբ Հայաստան է ուղարկվում քվեստոր Տավրոսը: Նա պետք է վերականգներ հարաբերություններն Արշակ Բ-ի և կայսրության միջև:

[7]Ղազարյան Մ., Արշակ II, Թիֆլիս, 1909, էջ 65:

Հռոմեական բանագնացն այնպես էր ցույց տալիս, թե իբր ոչինչ չգիտե պարսից արքային Հայոց թագավորի ցույց տված օգնության մասին, դրանով լռելյայն ներվում էր Արշակ Բ-ի հակահռոմեական արարքը:

Քվեստոր Տավրոսի դիվանագիտական առաքելությունը պսակվեց լիակատար հաջողությամբ: Ուղղակի և անուղղակի ճնշման տակ Արշակ Բ-ն հարկադրված էր խզել կապը Շապուհ Բ-ի հետ և հարել Հռոմին: Միաժամանակ Հայաստանում խաղաղություն է տիրում:

Այս շրջանում ևս Շապուհ Բ-ն քանիցս փորձել է Արշակ Բ-ին վերստին իր կողմը գրավել: Այդ նպատակով նա, Ամմիանոս Մարկելլինոսի վկայության համաձայն, մեծ ջանքեր էր թափում, դիմելով խաբեության, սպառնալիքների ու նենգության: Որպեսզի հարկադրի Արշակ Բ-ին նորից իր հետ դաշն կնքելու, Շապուհ Բ-ն 355 թ. ընթացքում անընդհատ հարձակումներ է կազմակերպում:

Սասանյանների զորքերը ներխուժում են հարավային Հայաստանի ու Միջագետքի սահմանամերձ շրջանները, թալանում բնակչությանը, տանում անասունները: Արևելքի կառավարիչ Մուզոնիանոսը բնավ ուշադրություն չէր դարձնում բնակչության կրած աղետների վրա և ինքն էլ իր հերթին շարունակում էր խլել ժողովրդի ինչքն ու պաշարները:

Պապը (մոտ 353-374) հայոց Արշակունի թագավորն է 370 թվականից: 17 տարեկանում հաջորդել է հորը՝ հայոց արքա Արշակ Բ–ին: Մայրն էր Սյունյաց Անդոկ մեծ իշխանի դուստրը՝ Փառանձեմ թագուհին: Պապը գահին հաստատվել է Հռոմեական կայսրության օժանդակությամբ:

Գործակցելով Մուշեղ Մամիկոնյանի հետ՝ 371 թվականին Ձիրավի ճակատամարտում պարտության են մատնել պարսկական զորքերին, ինչի շնորհիվ դարձել է հայոց թագավոր: Իշխելով երկրի համար արտաքին և ներքին ծանր պայմաններում՝ Պապը կարողացել է վերամիավորել Հայաստանից անջատված ծայրագավառները, չափավորել եկեղեցու տնտեսական և քաղաքական հզորությունը, փորձել է ազատվել Հռոմեական կայսրության գերիշխանությունից: Ըստ որոշ կարծիքների՝ Պապ թագավորի օրոք հայոց բանակի թիվը հասնում էր 90.000-ի: Պապը եկեղեցուց բռնագրված հողերը շնորհել զինված ծառայություն կրող մանր ազնվականությունը, կրճատել է վանքերի թիվը, վերացրել կուսանոցները:

Մեծ Հայքի թագավորությունը Արշակունյաց օրոք՝ 66-385 թթ. սահմաններով Ներսես Ա Պարթև կաթողիկոսի մահից հետո, Պապը, Շահակ Ա Մանազկերտցուն արգելելով Արևելահռոմեական կայսրության Կեսարիա քաղաքի մետրոպոլիտի մոտ օծվելու գնալ և Մեծ Հայքում հայոց եպիսկոպոսների կողմից Հայոց կաթողիկոսին օծել տալով, փաստորեն, դրել է Հայ Առաքելական Եկեղեցու անկախացման և ազգայնացման հիմքը:

Նախարարների որոշ շրջանում ևս Պապի նկատմամբ դժգոհություններ են սկսում առաջանալ արտաքին քաղաքականության հարցերում: Պապը այն գահակալներից չէր, որ խաղալիք լիներ հռոմեացիների ձեռքին: Նա արտաքին քաղաքականության ասպարեզում, հատկապես իր գահակալության վերջին տարիներին, աշխատել է միանգամայն ինքնուրույն լինել:

Փավստոսի մոտ ականարկներ կան այն մասին, որ Պապը փորձել է նույնիսկ բանակցությունների մեջ մտնել Շապուհի հետ: Պապն աշխատել է նաև երկրից դուրս հանել հռոմեական կայազորը, որոնց հրամանատար Տերենտիոսը ամեն կերպ միջամտում էր երկրի ներքին կյանքին: Պապի ինքնուրույն քաղաքականությունն առաջ է բերել հատկապես Հռոմի դժգոհությունը:

Հայաստանում հռոմեական զորքերի հրամանատար Տերենտիոսը Պապին ամբաստանել է պարսից արքա Շապուհ II–ի հետ գաղտնի կապ պահպանելու մեջ: Վաղեսը, խորհրդակցության պատրվակով, Պապին հրավիրել է Տարսոն և հսկողության տակ առել, սակայն վերջինս իր 300-անոց թիկնազորով ճեղքել է շրջապատումը և, խուսափելով հետապնդող հռոմեական զինվորական ուժից, վերադարձել հայրենիք: Տերենտիոսին փոխարինած Տրայանոսը կարողացել է շահել Պապի վստահությունը, նրան հրավիրել է խնջույքի և դավադրաբար սպանել:

Հայաստանի առաջին բաժանում կամ Մեծ Հայքի բաժանում, 387 թվականին Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև տեղի ունեցած միջքաղաքական պայմանավորվածություն, որի արդյունքում Մեծ Հայքի թագավորությունը կիսվեց երկու մասի:

Բաժանման ընթացքում վճռորոշ դեր են խաղացել ժամանակի հայ նախարարները, որոնց մեծ մասը պաշտպանել է պարսիկներին, մյուսները անցել են Հռոմի կողմը: 378 թվականին վեստգոթերի դեմ Ադրիանապոլսի ճակատամարտում Հռոմեական զորքերի

ծանր պարտությունից և Վաղես կայսեր զոհվելուց հետո սաստկացան <<բարբարոս>> ցեղերի հարձակումները, որոնց հետևանքով թուլացած կայսրությունը զրկվեց Մերձավոր Արևելքում գործուն քաղաքականություն վարելու և Սասանյան Պարսկաստանի առաջխաղացումները զենքով կանխելու հնարավորությունից: Հռոմեա-պարսկական բանակցությունները հանգեցրին 387 թվականի հաշտության պայմանագրի կնքման, որով Մեծ Հայքը բաժանվեց նրանց ազդեցության ոլորտների միջև, արևմտյան (Հռոմեական) մասում գահակալեց Արշակ Գ-ն, իսկ արևելյան (պարսկական) և մեծագույն մասում՝ Խոսրով Դ-ն:

ԳԼՈՒԽ 5. ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Պապի դավադիր սպանությունից հետո Հռոմի աջակցությամբ Մեծ Հայքի թագավոր դարձավ նրա ազգական Վարազդատը (374-378 թթ.), որն ապրել և կրթվել էր Հռոմում, հռչակվել օլիմպիական մրցախաղերում: Վարազդատը ևս վարում էր Հռոմի ու Պարսկաստանի միջև խուսանավելու քաղաքականություն:

Պատմիչների վկայությամբ՝ Վարազդատը հուժկու մարզիկ էր, բայց բավական միամիտ էր, որի համար էլ գլուխ չէր հանում պետական գործերից: Վռամշապուհ արքա Շուտով տարաձայնություններ առաջ եկան արքայի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի միջև:

Վարազդատը իր դայակ Բատ Սահառունու դրդմամբ սպանել տվեց Մուշեղ Մամիկոնյանին, իսկ սպարապետության գործակալությունը հանձնեց Սահառունուն: Վարազդատի քաղաքականությունից դժգոհ հայ նախարարներն սկսեցին համախմբվել Մանվել Մամիկոնյանի շուրջը, որը 378թ. Կարինի ճակատամարտում պարտության մատնեց Վարազդատին և վտարեց երկրից:

Մանվել Մամիկոնյանի խնամակալությամբ Մեծ Հայքի թագավոր հռչակվեց Պապի անչափահաս որդի Արշակ III-ը (378-389 թթ.): Երկրի փաստացի ղեկավար դարձավ Մանվելը, որը կարողացավ որոշ ժամանակով համախմբել բոլոր նախարարներին եւ երկիրը զերծ պահել պարսիկների ու հռոմեացիների ոտնձգություններից:

Իրավիճակը կտրուկ փոխվեց Մանվել Մամիկոնյանի մահվանից հետո: Նախարարների մեծ մասը հրաժարվեց ենթարկվել Արշակ III-ին և պարսից արքայի աջակցությամբ Հայոց արքա հռչակվեց Խոսրով IV Արշակունին (385-389 թթ.): Արշակի իշխանության տակ մնացին երկրի արեւմտյան մի քանի գավառները, իսկ երկրի մեծագույն մասն անցավ Խոսրովի իշխանության տակ[8]:

Մեծ Հայքը փաստորեն բաժանվեց երկու մասի և ավելի թուլացավ: Երկարատև բանակցություններից հետո բյուզանդական կայսրը և պարսից արքան համաձայնության եկան վավերացնելու Հայաստանի բաժանումը: 387թ. կնքված պայմանագրով

[8]Լեո, Երկերի ժողովածու, Հատոր 1, Երևան, 1966թ., էջ 198:

Հայաստանի արեւմտյան մասը հռչակվեց Հռոմի ազդեցության շրջան, իսկ արևելյան մեծագույն մասը՝ Պարսկաստանի[9]:

Բյուզանդական ու պարսկական զորքեր հաստատվեցին իրենց ազդեցության գոտիներում: Այսպիսով՝ հարևան տերությունների միջև բաժանված ու թուլացած Հայոց պետությունը այլևս ի զորու չէր ինքնուրույն քաղաքականություն վարելու, և ժամանակի հարց էր նաև թագավորության վերացումը: 389թ. Արշակ III-ի մահից հետո, Հռոմը իր ազդեցության տակ գտնվող Հայաստանի արևմտյան մասի կառավարումը վստահեց Խոսրով IV-ին, որով երկիրը նորից միավորվեց մեկ թագավորի իշխանության տակ: Խոսրովը պարտավոր էր արևմտյան շրջաններից հավաքած հարկը ուղարկել կայսրին, իսկ արեւելյանից հավաքածը՝ պարսից արքային:

[9]Հայ Ժողովրդի պատմություն, Հատոր 2 (ԳԱ Հրատ.), Երևան, 1984թ., էջ 354:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների հիմնական եզրահանգումներն են.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ Արշակունիները պարթևական արքայատոհմ են։ Մ. թ. ա. 247 թվականին իշխանության է հասել Պարսկաստանում, և երկիրը կառավարել շուրջ կես հազարամյակ՝ մինչև մ. թ. 226 թվականը։ Այդ ընթացքում Մերձավոր Արևելքում տիրապետող էր հելլենիզմը։ Պարթև Արշակունիները կարողացել են իրենց գերիշխանությունը և տոհմական ճյուղերը հաստատել Մեծ Հայքում, Վիրքում և Աղվանքում։ Հայաստանում Արշակունիները հաստատվել են 52 թվականից և իշխել մինչև 428 թվականը։
- Տրդատ Բ-ն Հայոց Արշակունի թագավորն էր։ Թագավորել է 217-252 թվականներին։ Չդիմանալով հզորացող Սասանյանների հարձակումներին՝ հեռացել է Հռոմեական կայսրություն։
- Քրիստոնեության ընդունումը Հայաստանում տեղի է ունեցել 301 թվականին։ Դա հայ ժողովրդի պատմության մեջ մի դարակազմիկ իրադարձություն էր։ Տրդատ Գ Մեծ Արշակունին (287-330 թթ.) աշխարհում առաջինը ճանաչեց քրիստոնեությունը՝ որպես պետական, պաշտոնական կրոն։
- Հայոց եկեղեցին սովորաբար վարդապետական անվան կիրառում չի ունեցել. այն կոչվել է Հայաստանյայց (կամ՝ Հայաստանի), Հայոց կամ Հայ անունով, իսկ սուրբ, առաքելական, ուղղափառ կամ այլ կոչումները գործածվում են որպես պատվանուն։ <<Առաքելական>> անունով այն տարբերվում է Մերձավոր Արևելքի քրիստոնեական մյուս եկեղեցիներից։
- Տրդատ Գ Մեծ (250-ական թվականներ – 330), Մեծ Հայքի Արշակունի թագավոր 287 թվականից։ Հայոց թագավոր Խոսրով Բ Արշակունու (272-287) որդին։ Կրթվել և դաստիարակվել է հռոմեական արքունիքում։
- Ըստ պատմիչներ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու, տիրապետելով արտակարգ ուժի, աչքի է ընկել կրկեսամարտերում, ինչպես նաև՝ Հռոմեական կայսրության մղած պատերազմներում։
- Հռոմեա-պարսկական պատերզամները իրար հաջորդելով շարունակվում էին՝ կազմաքանդ անելով Հայաստանի տնտեսությունը։ Պատերազմի սկզբում

առավելությունը պարսկական զորքերի կողմն էր, սակայն հռոմեացիները, համալրում ստանալով, 297 թվականին հայկական զորամասերի օգնությամբ հռոմեացիները սոսկալի պարտության մատնեցին պարսիկներին։ Ներսեհ արքան գերի ընկավ իր ողջ ընտանիքով հանդերձ։ Վերջինս ստիպված 298 թվականին Մծբինում հաշտության պայմանագիր կնքեց։

- Պապի դավադիր սպանությունից հետո Հռոմի աջակցությամբ Մեծ Հայքի թագավոր դարձավ նրա ազգական Վարազդատը (374-378 թթ.), որն ապրել և կրթվել էր Հռոմում, հռչակվել օլիմպիական մրցախաղերում։ Վարազդատը ևս վարում էր Հռոմի ու Պարսկաստանի միջև խուսանավելու քաղաքականություն։
- Պատմիչների վկայությամբ՝ Վարազդատը հուժկու մարզիկ էր, բայց բավական միամիտ էր, որի համար էլ գլուխ չէր հանում պետական գործերից։ Վռամշապուհ արքա Շուտով տարաձայնություններ առաջ եկան արքայի եւ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի միջև։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լեո, Երկերի ժողովածու, Հատոր 1, Երևան, 1966թ.:
2. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հատոր 1,Երևան, 1981թ.:
3. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007թ.:
4. Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ, Երևան, 1945թ.:
5. Հայ Ժողովրդի պատմություն, Հատոր 2 (ԳԱ Հրատ.), Երևան, 1984թ.:
6. Ղազարյան Մ., Արշակ II, Թիֆլիս, 1909թ.:
7. Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1981թ.: